Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի <<Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվար /20 դասաժամ/, ֆիզկուլտուրա /27 դասաժամ/, ինֆորմատիկա, /6,5 դասաժամ/ հասարակագիտություն, /7 դասաժամ / ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 14)

2. Բարձրագույն կրթության մանկավարժական որակավորման աստիճանը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն,

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաև զինգրքույկ,

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2022 թվականի սեպտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 16:00 -ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի սեպտեմբերի 23-ին ժամը 15:00- ին, Սյունիքի մարզի Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել /0285/ 2-46-37 հեռախոսահամարով: